ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Սյունիքի մարզի «Լեհվազի միջնակար դպրոց» ՊՈԱԿ-ի Մայրենիի (7 դասաժամ) , Տեխնոլոգիայի (3 դասաժամ տղաներ) և (3 դասաժամ աղջիկներ) , Հասարակագիտության (2 դասաժամ) , Հայոց եկեղեցու պատմության (1 դասաժամ) թափուր տեղերի համար: Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- *դիմում (Ձեւ 1),*
- *մեկ լուսանկար 3x4 չափի,*
- *բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),*
- *անձը հաստատող փաստաթուղթ,*
- *«Հանրակրթությանմասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),*
- *ինքնակենսագրություն (Ձեւ 5),*
- *այլ պետությունների քաղաքացիները՝ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,*
- *ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,*
- *հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),*
- *որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:*

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են սեպտեմբերի 1-ից մինչև սեպտեմբերի 14-ը ներառյալ, ամեն օր՝ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2023 թվականի սեպտեմբերի 19-ին՝ժամը 15:00-ին, ՀՀ Սյունիքի մարզի Լեհվազի միջնակարգ դպրոցում, հասցեն՝ Մեղրի համայնք, գ.Լեհվազ 1-ին փողոց, շենք 1:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (077) 389505, (077) 579578 հեռախոսահամարներով: